ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ 2015Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդի 18.12.2014թ. 35/8-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման կարգի» 8-րդ գլխի պահանջները,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով,

նկատի ունենալով փաստաբանների շրջանում անցկացված հարցումները վերապատրաստման համար նախընտրելի թեմաների վերաբերյալ,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

- ***հաստատել** 2015թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս ամիսների) **փաստաբանների վերապատրաստման համար թեմաների ցանկը** (համաձայն հավելվածի).*
- ***հանձնարարել Պալատի վերապատրաստման հարցերով համակարգողին սույն որոշմամբ հաստատված թեմաների շրջանակում կազմակերպել վերապատրաստման դասընթացները՝ սկսած** 2015թ. **հունվար ամսից**.*
- ***սահմանել, որ սույն որոշումը գործում է մինչև 2015թ. հունիսի** 30-**ը** (ներառյալ).*
- ***սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանի վրա:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

19 **դեկտեմբերի 2014թ.**
թիվ 423-**Լ**
ք.Երևան

Հավելված՝
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի 19.12.2014թ.
թիվ 423-Լ որոշման

_____ Արա Զոհրաբյան

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԹԵՄԱՆԵՐ

(2015**թ. հունվար-հունիս ամիսներ**)

ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐ

1. Հայցադիմում կազմելու հմտություններ.
2. Դատաքննության փուլերը քաղաքացիական դատավարությունում.
3. Ապացուցման միջոցները քաղաքացիակական դատավարությունում.
4. Փաստական հանգամանքները քաղաքացիական դատավարությունում.
5. Բողոքարկման փուլը՝ քաղաքացիական դատավարությունում.
6. Կոորպորատիվ վեճերով փաստաբանի մասնակցություն.
7. Ապահովագրական վեճեր.
8. Գործարքների ինստիտուտը.
9. Վիճահարույց և առոչինչ գործարքներ.
10. Քաղաքացիական պայմանագրի փոփոխման և լուծման գիտագործնական հարցեր.
11. Նվիրատվության ինստիտուտը, նվիրատվության պայմանագիր.
12. Բարեխիղճ ձեռքբերման ինստիտուտ.
13. Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության ճանաչման առանձնահատկությունները.
14. Ինքնակամ շինությունների օրինականացման ինստիտուտը.
15. Պատասխանատվությունը պարտավորական հարաբերություններում.
16. Վնասի հատուցման ինստիտուտ.
17. Անհիմն հարստացման ինստիտուտը.
18. Պատվի և արժանապատվության իրավունքի պաշտպանության առանձնահատկությունները.
19. Ժառանգման ինստիտուտ: Վիճահարույց հարցեր.
20. Գործարարական իրավունք.
21. Իրավաբանական անձանց լուծարման և վերակազմավորման առանձնահատկությունները.
22. Իրավաբանական անձանց հիմնադրման առանձնահատկությունները (ըստ կազմակերպաիրավական ձևի, հիմնադիրների կազմի).

23. Բաժնետիրական ընկերության կառավարման առանձնահատկությունները.

24. Սնանկության ինստիտուտ.

25. Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում.

26. Հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության ինստիտուտը.

27. ԱՊՊԱ համակարգը Հայաստանի Հանրապետությունում.

28. Սպառողների իրավունքների պաշտպանություն.

29. Միջազգային պայմանագրային իրավունք.

30. Միջազգային փոխադրումներ.

31. Միջազգային վճարային գործարքներ.

32. Միջազգային մասնավոր իրավունք.

33. Աշխատանքային վեճերի առանձնահատկությունները.

34. Աշխատանքային իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման առանձնահատկությունները.

35. ՀՀ ընտանեկան օրենսդրության հիմնախնդիրները և ընտանեկան վեճերի առանձնահատկությունները.

36. Հողային իրավունք.

37. Արբիտրաժ.

ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝

38. Գաղտնի քննչական գործողությունները և օպերատիվ հետախուզական միջոցառումները քրեական դատավարությունում.

39. Խափանման միջոցները քրեական դատավարությունում ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի.

40. Ապացույցները քրեական դատավարությունում ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի.

41. Փաստաբանների ներգրավումը քրեական գործերում: Պրակտիկ հիմնախնդիրները և դրանց գործնական լուծումները.

42. Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ.

43. Պաշտպան հրավիրելը, նշանակելը, փոխարինելը և վարույթին նրա մասնակցելու այլ հիմքերը.

44. Դատական քննության արագացված կարգի կիրառման հիմնահարցերը ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում.

45. Քրեական պատասխանատվությունից ազատվելը գործուն զղջալու, տուժողի հետ հանցանք կատարած անձի հետ հաշտվելու և իրադրության փոփոխության հիմքով: Նյութական և դատավարական ասպեկտներ.

46. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ (ճանապարհային երթևկության կանոնների խախտում) և 244-րդ (ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը) հոդվածների կիրառման հիմնահարցերը դատական պրակտիկայում.

47. Տուգանքը հանրային աշխատանքով փոխարինելու, գույքի բռնագանձման, համաներման հիմքով պատժից ազատելու հիմնահարցերը դատական պրակտիկայում.

48. Դատական փորձաքննությունների հիմնախնդիրները (տեսություն և պրակտիկա).

49. Դատական փորձաքննությունները քրեական գործերով միջազգային իրավական համագործակցության համատեքստում.

50. Հանցագործությունների քննության կրիմինալիստիկական օրինաչափությունները.

51. Ապացույցները ՀՀ քրեական դատավարությունում.

52. Քրեական գործերով վերաքննիչ բողոք ներկայացնելու առանձնահատկությունները.

53. Քրեական գործերով վճռաբեկ բողոք ներկայացնելու առանձնահատկությունները, վարույթ ընդունելու ինստիտուտը.

54. Պաշտպանության ռազմավարություն և մարտավարություն.

55. Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման գործերի քննության առանձնահատկությունները Հայաստանում.

56. Տուժողների, վկաների ցուցմունքների հրապարակման հիմնախնդիրները քրեական գործի ընթացքում էական հակասության հիմքով.

57. Խուլիգանության գործերով դատական պրակտիկայի վերլուծություն.

58. Ինքնասպանության հասցնելու գործերով դատական պրակտիկա.

59. Տևող և շարունակվող հանցագործությունների առանձնահատկությունները.

60. Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկությունները.

61. Պայմանական վաղաժամկետ պատժից ազատման հիմնախնդիրները.

62. Համաներումը, դրա կիրառման հիմնախնդիրները.

63. Անչափահասների մասնակցությամբ քրեական գործերի քննության առանձնահատկությունները.

64. Նոր երևան եկած և նոր հանգամանքով գործերի վերանայման առանձնահատկությունները.

65. Քրեական ենթամշակույթ.

66. Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ.

67. Առանձին հանցագործություններին առնչվող հիմնախնդիրներ.

68. Պատժի տեսակները քրեական իրավունքում.

69. Դատապարտված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կազմակերպումը.

70. Դատաբժշկական փորձաքննություն.

ՎԱՐՉԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝

71. Հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերի առանձնահատկությունները և քննարկման կարգը.

72. Վարչարարություն.

73. Հայեցողության ինստիտուտը վարչական իրավահարաբերություններում.

74. Վարչական ակտերի տեսակները.

75. Վարչական ակտերի անվավերությունը.

76. Վարչական դատավարության օրենսդրությունում կատարված փոփոխությունները

77. Հայցի տեսակները վարչական դատավարությունում.

78. Ապացուցման միջոցները վարչական դատավարությունում.

79. Ապացուցման բեռի բաշխումը վարչական դատավարությունում.

80. Դատաքննության նախապատրաստական փուլը վարչական դատավարությունում.

81. Բողոքարկման փուլը՝ վարչական դատավարությունում.

82. Տնտեսական մրցակցության իրավական կարգավորումը ՀՀ-ում.

83. Փաստաբանի մասնակցությունը մաքսային գործերով.

84. Հարկային իրավախախտումներ.

85. Հարկային վեճերի արտադատական և դատական քննության առանձնահատկությունները.

86. Գործարքների կնքման արդյունքում առաջացող հարկային պարտավորություններ.

87. Հարկերի տեսակները.

88. Անհատ ձեռնարկատիրոջ հարկային պարտավորությունները.

89. Իրավաբանական անձանց հարկային պարտավորությունները.

90. Օտարերկրյա անձանց հարկումը Հայաստանի Հանրապետությունում.

91. Պետական գնումների գործընթացի իրավական կարգավորումը. Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները հարկային իրավունքի և ստուգումների ոլորտներում.

92. Արգելանքի կիրառումը վարչական մարմինների կողմից.

93. Վարչական մարմինների անօրինական գործողությունների դեմ պայքարի պրակտիկ միջոցներ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ՝

94. Փաստաբանի մասնակցությունը Եվրոպական դատարանում.

95. Եվրոպական դատարան գանգատ գրելու առանձնահատկությունները.

96. Եվրոպական դատարան դիմումներ ներկայացնելու հմտություններ.

97. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը.

98. Խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի և ՀՀ ներպետական օրենսդրության պահանջները.

99. Միջազգային արբիտրաժ.

100. Փաստաբանի մասնակցությունը արբիտրաժային տրիբունալում, որպես կողմի ներկայացուցիչ.

101. Փաստաբանի մասնակցությունը արբիտրաժային տրիբունալում, որպես արբիտր.

102. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 14-րդ հոդվածի վերաբերյալ գանգատների ընդունելիության առանձնահատկությունները.

103. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը ՄԻԵԿ-ի և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային այլ փաստաթղթերի համատեքստում.

104. Տարեցների իրավունքների պաշտպանությունը ՄԻԵԿ-ի և Վերանայված սոցիալական Եվրոպական խարտիայի ներքո.

105. Քաղաքացիության ձեռքբերման իրավական հիմքերը և առանձնահատկությունները: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի փոխկապակցվածությունը քաղաքացիության վերաբերյալ ներպետական օրենսդրության հետ.

106. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն կրոնի և սեռի հիմքով խտրականության բացառում.

107. Մարդու իրավունքները և խտրականության արգելքը միջազգային իրավական կարգավորումների և ներպետական իրավունքի զարգացման համատեքստում.

108. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը.

109. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն կրոնի կամ համոզմունքի հիմքով խտրականության բացառում.

110. Ապացույցների գնահատման կանոնները ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի.

111. Կյանքի իրավունքի պաշտպանությունը ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի.

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝

112. Փաստաբանի վարքագծի կանոնագիրք (դեոնթոլոգիա).

113. Դատական փորձաքննություններ (ընդհանուր կամ առանձին).

114. Բարոյական վնասի հատուցման ինստիտուտը ՍԴ որոշման համատեքստում.

115. Փաստաբանական գրասենյակի կառավարման առանձնահատկությունները.

116. Արդյունավետ բանակցություններ.

117. Արդյունավետ բիզնես հաղորդակցություն.

118. Արդյունավետ հռետորաբանություն.

119. Սթրեսի կառավարում.

120. Կոնֆլիկտների կառավարում.

121. Ֆինանսներ ոչ ֆինանսիստների համար.

122. Որոշումների կայացում և խնդիրների լուծում.

123. Էմոցիոնալ կոմպետենտություն.

124. Բիզնես կառավարում.

125. Փախստականների իրավունք.

126. Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հետ կապված հմտություններ

127. Դատական ակտերի հարկադիր կատարման վարույթը ըստ գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի.

128. Կենսաթոշակային իրավունք.

129. ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ (քաղաքացիական ուղղվածություն).

130. ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ (քրեական ուղղվածություն).

131. ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ (վարչական ուղղվածություն).

132. ՀՀ ներպետական օրենսդրության բացթողումները՝ ՄԻԵԿ-ի և այլ կոնվենցիաների հիմնադրույթների համատեքստում.

133. Հայաստանի Հանրապետությունում կայացած դատական ակտերը Ռուսաստանի Դաշնությունում ճանաչելու և կատարելու ինստիտուտը.

134. Փաստաբանական հմտություններ.

135. Փաստաբանական գործունեության հոգեբանություն.

136. Միգրացիոն հոսքերի, միգրացիոն քաղաքականության և միգրացիոն օրենսդրության վերաբերյալ՝ այդ թվում աշխատանքային միգրացիա.

137. Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակի, քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման, երկքաղաքացիության իրավական վիճակի առանձնահատկություններ.

138. Փաստաբանության ինստիտուտի միջազգային փորձը (համեմատական վերլուծություն).

139. Նոտարական գործողությունների ինստիտուտը.

140. Քաղաքացիության ձեռքբերումը Հայաստանի Հանրապետությունում, այլ երկներում (երկքաղաքացիություն).

141. Փաստաբանական գործունեությանն առնչվող իրավական ակտեր և նախագծեր: